

# ԵՐԵՒ ԵՐԳ ՏԵԽԱԿԱՆՈՒԿ ԱՌՋԿԱՆ

Հ | Ե



Ե. 2ԱՐԵՆՑ

Et c'était le dernier amour du  
soir antique...  
Albert Samain.

### Ճ Ա Մ Բ Ի Ն . . .

Օրօրւելով կառքն էր վազում սրբնի թաց,  
դաշտի միջնու—ճանապարհով ցեխապատ...  
Թօնն էր մաղում միապաղադ, ցուրտ ու թաց.  
օրն էր մարում հիւանդու ու մեղմ-փատ... .

Օրօրւում էր կառքը: Վազում: Ու վազում:  
Կառապանը երգում էր մի ինչ-որ երգ:  
Թոքախտաւոր կինն էր մօսիս դառն հազում...  
Մութն էր զրկում Արևմուտք ու Արևելք...

Թօնն էր մաղում միապաղադ, ցուրտ ու թաց:  
Ագռաւները անցնում էին քրքջալով...  
Թոքախտաւոր կինը անսէր հեծկտաց...  
Քամին անցաւ Մէկի մասին ողբալով... .

Ու կառապանն, օրօրւելով, գէռ երկար  
երգում էր իր օրերի երգը անդոյն...  
Գնում՝ էինք: Ու՛ր.-չդիտեմ.—վերջ չկար...  
Գնում էինք: Անխօս: Ոնձայն: Ու անքուն...

## ԱՆԳՈՒՆ ԳԻԾԵՐԻՆ

Քնել չի լինում...

Հէնց հիմա, երբ ես ուղում եմքնել—  
ամեն, ամեն ինչ մտքիցս հանել...

Հայեացքներում՝ անփակ՝ թափառում են լուռ,  
ու միտքս, տարտամ, դեգերում է մութ դաշտերում տխուր...

Մթութեան գրկում լալիս է դողդոջ  
լույսը լապտերիս՝ մեռնող Աղջկալ հոգեարքի պէս...  
Մէկը բաղկում է դռներն անցածի—  
ու յիշում եմ Քեզ...

Մոոցւած երգի պէս դողում է հոգիս  
անյայտ ձեռքերի լոյս մասների տակ...  
Ու ահա մէկ-մէկ շարւում են իմ դէմ  
պատկերներ .. դէմքեր, որ մեռել էին  
առանց յիշատակ—  
առանց յիշատակ...

Այնտեղ, մութի մէջ յայտնում է ահա  
Տեսիլդ գունատ ու տիբադալուկ...  
Մոոցւած երազի խամրած ցոլքի պէս  
նայում են մթնում երկու սև աշեր...  
Ու յիշում եմ ես անմեռուկ մի օք—  
մի հին իրիկուն՝  
Գոյնի ու Զեկի տրտմադին թաւհոր—  
հարսանքի հանդէս.—  
ու բաղդը, հեռուում — մի ծեր Քահանայ՝  
չփիտեմ կնքում՝ թէ թաղում էր Քեզ...

ԵՅ... քնել, քնել...  
 Աչքերս փակեմ ու սեղմեմ ամուր  
 ու չմտածեմ ոչնչի մասին...  
 —Միթէ, երբեմն, չէինք միասին...  
 —ախ! - լրւած հոգուս անզօրը յետ տուր.  
 ուզում եմ քնել՝ գիշերն անց կացաւ...  
 —Երազ էր արդեօք, զառանցանք. թէ—ցաւ...  
 —Ցաւ, ցաւ էր անշուշտ.  
 Դու երբէք, երբէք ինձ չես ժպտացել —  
 Յո ժպիտն էլ է ինձ ցաւ թւացել...  
 Օ!..իմ Քոյր՝ աղջիկ!—  
 Ես Քեզ կանչեցի երկար ու երկար —  
 Դու չեկար, չեկար...  
 Ցանկացայ լինել Քեզ՝ համար մի կոյր  
 ու հլու զերի—  
 և ես իմ սիրով քեզ ցանձրով լիրով...  
 Օսամը էր հոգիս քեզ համար, ինչու՞ս  
 օտար գաշտերից բերած ծաղկելուն. —  
 տանջանքի վարդեր, յոյզի ծաղիկներ,  
 երազի սատեր — յոյսերի ցոլքեր,  
 Ու կարմիր, կարմիր խոշխաշներ ցուի —  
 այս ծաղիկներով զարդարւած հոգիս Քեզ նույր բերի,  
 որ Քո կոյս հոգին իմի հետ ցաւի. .  
 Ու ես չեմ յիշում, թէ ինչպէս մի օր —  
 անդարձ, անմեկին...  
 Ես Քեզ թաղեցի նոր կեանքի շեմքէն .  
 2Ե, Դու գնացիր, չզիտեմ թէ ուր,

Ես էլ բնացի... ի՞արկէ այնոտեղ,  
որտեղ ապրել ես դու մի ժամանակ—  
ապրել չէր լինի...  
Չէր լինի տեսնել լոյսերը Զեր տաճ,  
Չէր լինի տեսնել լայն փողոցը Զեր—  
որը մինչ հիմա ես չեմ մոռացել ..

Թողնենք, ախ, ինչ հոգ.  
չէ՞նը չգիտէ, չգիտէ ոչ ոք,  
թէ ինչու կեանքում այսպէս է եղել.—  
սէրը—մեղ համար արցունք ու արիւն.  
սէրը—մեղ համար մահւան գին ունի.—  
իսկ կնոջ համար.—հրճւանքի գինի..

Այս անքուն, անքուն ու լուռ գիշերին,  
ախ!—էլ չեմ ուզում յիշել երգը հին..  
Մի զոյգ աչերի թաղւած ցնորքով  
ուզում ես փորել մոխիրներն հոգուս,  
արդէն լուսացաւ. արդէն ուշ է, ուշ...  
թող, մի՛ պղտորիր յատակը հոգուս...  
Դրա համա՞ր ես ֆու այստեղ եկել  
օ!.. նենզոտ տեսիլ..  
Ուզում ես հոգուս վէրքերը պեղել—  
որի գանձերը չուզեցիր տեսնելլի..  
Օհ!.. զզւելի՛ կին!—  
քեզ արատ է պէտք—պին արատ հոգու,  
որ լաւ ծիծաղես ու չարկամ խնդաս—  
ու ամբողջ հոգով հրճւանքից թնդաս...  
Ուզում ես, պատմեմ, թէ ի՞նչպէս յանկարծ  
ինձ համար փոխւեց, փոխւեց ամեն բան—



ու ես թողեցի երազի ճամբան... .

Մի գիշեր էր մութ... Անձրկ էր գալիս,

ու մի անզորք էր իշել իմ հողում.

ամայութիւնն էր հեկեկում այստեղ՝

հին ու մոռացւած աղօթքների տեղ.

Եւ ես դուրս եկայ, ցեխստ փողոցսվ

քայլեցի երկար.

Հզիուեմ թէ ուզ—ինձ համար ոչ մի ճանապարհ չկար...

Ու, ես քայլեցի... .

Ու ահա իմ գէմ՝ մի երկար փողոց,

հեռուում մի քանի տարտամ կրակներ.

ու ես մօտեցայ այդ կրակներին,

որսնք հոգուս մի պաղանի լուր բերին...

Մի հին լուր՝ հոգուս մէջ պահւած ծածուկ—

ու ես այն շեմքը անցայ կամացուկ...

Ու... այս եմ յիշում.—

մի ցածր անկողին՝ թաղւած մշուշուշում,

ու մի մերկ մարմին...

Ու ցաւոտ, ճնշւած հեկեկանքը իմ... .

Ու դուրս եկայ ես, --

միայն զզացի, որ ցուրտ է, քամի, —

որ կեանքն ինձ համար էլ ոչինչ չունի.. .

Ինձ համար մեռու ամեն սըբութիւն! —

հեռացիր, գնա, —

կեանքում Քեզ համար

բացւած կան բախտի դռներ անհամար.

Գնա, հեռացիր. —

Էլ Դուր ինձ համար չունես ոչ մի գիշ։  
պոռնիկ կամ թէ Դուր—միւնոյն է ինձ...—  
Երկուսդ էլ—էդ, եկուբսդ էլ՝ կին...  
Գնամ, սիրելիս—  
Դուր, Դուր իմ հոգին փողոց դարձրիք,  
իմ դահիճ, իմ քոյք.—  
գնամ, ախ!— գնամ.—  
գուցէ առանց ինձ երջանիկ լինես,  
ու թող մի վայրկեան քեզ մաքից հանել—  
ուզում եմ քնել—ախ!— ինչպէս քնել....

### Requiem.

Երեկոն անձրևոտ էր ու թաց...  
Փողոցները՝ դատաթիկ, անաղմուկ...  
Յուրաքանչին էր մնայնում սրբնթաց  
և տամուկ...

Ու գիշերը իջնում էր մթին...  
Երեւում էին մութ հեռևում  
փողոցի կրակներն երերուն՝  
յանձնւած ամօթին ու ստին....

Ու գնում էի ես յամբընթաց,  
տիրօքէն Թո անունը ասում...  
Հեռևում մի մերկ կին չար ինդաց...  
Մի ուրիշը բաղդի հեղնանքից էր խօսում...

Ու օրինում էի ես իմ սրտում  
մռացւած դամբարանը Թո մութ...  
Մէկն ասաց, որ ստում եմ, ստում...  
Ու լսում էր հեռւում մէկի լացն անօդուա...



(104.)

ՀԱՅ  
1153

10 կոս

ԳԱԱ Ֆիմճարար Գիտ. Գրադ.



FL0394698

Արագատիս Շ. Կ. Սուբէնեսնի Դ.մբա